



ՆՊԻՍԿՈՊՈՍԵԿՆ ՁԵՌՆԵԴՐՈՒԹՅԱՆ ՍՐԲԱՋԱՆ ՍՐԵՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ



ովտեմբերի 6-ին, հինգշաբթի օրը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Նորընտիր Հայրապետը՝ նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց իր առաջին եպիսկոպոսական ձեռնադրությունը՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Առավոտյան ժամերգությունից հետո Մայր Տաճարում կատարվեց նորընծաների սրբազան երգման արարողությունը: Իրման Ս. Սեղանի առաջ ծնկաշոք նրանք ուխտում են անխոտոր և անսայթաք ընթանալու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ուղղափառ վարդապետության և հավատի շավղով: Օրինապահության, հնազանդության և հավատարմության երգում են տալիս նրանք Վեհափառին, Մայր Աթոռին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիին և հայ ժողովրդին. «Խոստանամք և ուխտեմք հաւատարիմ լինել Սրբոյ Էջմիածնի մինչև ցվախճան կենաց մերոց և կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց Սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյս... Խոստանամք և ուխտեմք կալ մնալ ցվախճան կենաց մերոց անդամք և միաբանք սրբոյ ուխտիս որ ի Վաղարշապատ, և ծառայել երկիրդ Տեառն յօգուտ և ի փառս անուան Սրբոյ Էջմիածնի, սատար լինելով


մերովսանն ջանիք յառաջագէմ զարգացման և պայծառութեան սորին յամենայնի»: Երգմնագրի ընթերցումից հետո նվիրյալները ստորագրում են այն: Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսները վկայում են ուխտադրությանը: Երգման խորհրդավոր արարողությունը վերջանում է: Նվիրյալները՝ Հայկազուն ծ. վարդապետ Արրահամյան, Պարզե ծ. վարդապետ Վրթանեսյան (Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբաններ), Սերովբե ծ. վարդապետ Մանուկյան (Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբան և Եվրոպայի թեմի Հայրապետական պատվիրակ), Հայրիկ ծ. վարդապետ Ասլանյան (Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբան), Շնորհ ծ. վարդապետ Գալստյան (Ս. Երուսաղեմի միաբան և Կալիֆորնիայի առաջնորդ), Վարդան ծ. վարդապետ Տեր-Սահակյան (Մայր Աթոռի միաբան և Նոր-Նախիջևանի թեմի առաջնորդական փոխանորդ), Եղնիկ ծ. վարդապետ Ազնավուրյան (Մայր Աթոռի միաբան և Բաքվի ու Թուրքեստանի թեմի առաջնորդական փոխանորդ), երգման արարողությունից հետո բարձրանում են դեպի Վեհարան, ուր Վեհափառը նրանց օրհնում է «Պահպանիշով և խրախուսում:

Ցերեկվա ժամը 11-ն է: Աշնանային պարզ, արևոտ օր է: Ազգային-եկեղեցական ժողովի հոգևորական և աշխարհական պատ-

գամավորները, հյուրերն ու ուխտավորները, հավատացյալների հոծ բազմության հետ դիմում են Մայր Տաճար։ Մովածավալ բազմությունը լցրել է վանքի բակն ու դավիթը, մինչ ժողովրդական նորանոր հոսանքներ հասնում են Երևանից։ Մայր Տաճարում սուսեղ զգիլու տեղ չկա։ Ղասերը, ատյանը լիքն են աղոթողների, ուխտավորների բազմությամբ։ Մայր Տաճարի Գևորգյան պահա-

ման մեջ են նաև 7 նորընծաները, առանց սաղավարտի։ «Հրաշափառ»ով, խաչով, խաչվառով, խնկով և աղոթքով Մայր Տաճար է մտնում եկեղեցական թափորը՝ դեկավարությամբ օրվա հանդիսությանը խառնափառ Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի։

Մայր Տաճարի զանգերը ղողանջում են զվարթ ու հանդիսավոր։ Մեծ դժվարությամբ



Նորընծա եպիսկոպոսները հրաժարվում են աշխարհից

բանում և ավանդատանը տիրում է տոնական եռուղեռ։ Պահարանից հանվում են եպիսկոպոսական թանկագին զգեստները՝ եմիլիորոններ, շուրջառներ, անգին քարերով զարդարված խույրեր, օձագլուխ թանկարժեք գավաղաններ, խաչեր, ոսկեթել շապիկներ, արծաթյա բուրվառներ, արծաթակազմ ավիտարաններ և այլ թանկարժեք անոթներ ու սպասներ։ Վեհարանում հայրապետական շքով և աստիճանով զգեստավորվել է Վեհափառ Հայրապետը։ Եպիսկոպոսական լրիվ զգեստավորման մեջ են նաև Վարդան և Վահան արքեպիսկոպոսները, որպես Վեհափառի առընթերակները։ Զգեստավորված են բոլոր հոգևորականները, ճեմարանի ուսանողները։ Քահանայական զգեստավոր-

թափորը ձեղքում է ժողովրդի ծովածավալ բազմությունը, հայրապետական ամպհովանու տակ օրհնում է Վեհափառը շքերթի երկայնքին կանգնած իր ժողովրդին։ Խայտում է նրա հոգին, տեսնելով հայ ժողովրդին բոլորված դարերով սրբազործված այս հնամենի կոթողի շուրջը, սիրով և հարգանքով շրջապատած իր սիրելի Հայրապետին։

Վեհափառ Ս. Իջման սեղանի առջև լվացման կարգն է կատարում և նրա շրթները սուրբ պատարագի աղոթքներն են մրմնջում։ Միաժամանակ Մայր Տաճարի Ս. Գևորգյան պահարանից դուրս է գալիս և Ս. Հովհաննես Մկրտչի խորանի առջև շարվում է թափորի մի այլ մասը։ Առջևից ընթանում են դպիրները, որոնք բերում են խաչն ու

խաշվառը. կողքերից գալիս են զույգ կերո-
նակիրները: Ապա գալիս են սաղամոսասա-
ցները սպիտակ շապիկներով և ձեռքներին
սաղմոսարաններ, հետո դռնապանները՝
սպիտակ շապիկներով և ձեռքներին բանա-
լիներ. նույն ձևով նրանց հետևում են ըն-
թերցողները, երգման երգիչները, ջահընկա-
լները, կիսասարկավազներն ու սարկավազ-
ները՝ ուրարակիր դիպակե շապիկներով,
ձեռքներին սուրբ պատարադի սպասները:

Հառաչմամբ յամենաճանձնէ զփառաւո-
րեալ արարչութիւնդ՝ անեղծ և անստեղծ
անժամանակ Հոգւոյդ գթածի...», — լսվում
են Վեհափառի աղոթքի մրմունջները վարա-
դույրի ներսից: Նարեկացի... Օ՜ հաղարամյա
Նկեղեցի, քո աղոթքի, երգի, մրմունջի ամեն
մի տողից, դարերի իմաստնացած հառա-
չանքն է լսվում, մեր ժողովրդի տաճար
դարձած վերքի անմոռնչ և քաղցրալուր մե-
ղեղիները...:



Նորինձա Եպիսկոպոսներ ծնրադիր Վեհափառի առաջ

Ապա գալիս են շուրջառակիր քահանաները՝
ձեռքներին մասնատուփեր, եպիսկոպոսները
գավազաններով. ամենից վերջը գալիս են
խարտավիլակը և նվիրյալները:

Զույգ բուրվառակիրները խաշմերով
ուրարներով և սաղավարտ գլխներին, բուր-
վառի համաչափ խնկարկմամբ առաջնոր-
դում են Վեհափառին իր թափորով հանդերձ
դեպի Ս. Ստեփանոսի սեղանը:

Վարագույրը փակվում է: Դպիրները եր-
գում են «Ընտրեալը» մեղեդին: Երգի հըն-
չյունները հեղեղում են Տաճարի խնկարույր
նկարագրող գմբեթները, խառնվում վերա-
ցած, աննյութացած աղոթքների մրմունջ-
ներին. «Աղաչեմք և աղերսեմք արտասուալից

Սուրբ պատարագի խորհրդի սպասն է
դրվում: Շուտով դպիրները երգում են «Հո-
վի քաջ բանաւոր հօտի» շարականը: Վա-
րագույրը բացվում է: Վեհափառը բազմում
է աթոռին. նրա երկու կողմերում բազմել են
երկու արքեպիսկոպոսներ՝ գավազաններ
ձեռքներին և պատարագի զգեստավորու-
մով. աջ ու ձախ կանգնած են հայրապետա-
կան խորհրդանշանների կրողները, իսկ Հայ-
րապետի ոտքերի տակ փռած է կաթողիկո-
սական արծվեգորգը:

Սկսվում է ձեռնադրության խորհուրդը:
խարտավիլակ Մամբրե սրբազանը կանգնում
է ատյանում և իր բամբ ձայնով հայտարա-
րում:



Վեհափառ Հայրապետ օծում է
Տ. Սերովբե եպիսկոպոսի ճակատը

«Շնորհազարդ Սուրբ Հայրապետ Այս ինչ յայտնի լիցի մեծի Տէրութեան քում, զի միաբանք մեծի՝ Սրբոյ և Առաքելական Աթոռոյս էջմիածնի, հանդերձ համօրէն ուխտիւ, այսինքն եպիսկոպոսութեան, քահանայք, սարկաւազունք, կիսասարկաւազունք, ջահընկալք, երդմանեցուցիւք, ընթերցողք, դռնապանք և սաղմոսասացք, այլ և իշխանք և աղքատք, խնդիր ունիմք ի բարձրագահ Տէրութենէդ. վասն որոյ հայցեմք աղաչանօք, զի հրամայեսցես մեզ յանդիման լինել մեծանձնութեան քո և բացայայտել զխնդիր մեր»:

Լսվում է Հայրապետի պատասխանը.

«Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ՛ յառաջ մատչել և ողջամիտ դիտատրութեամբ բացայայտել Մեզ զոր ինչ խնդրէք»:

Այժմ ձեռնադրվողների արժանավորութեան մասին վկայութիւն պետք է տան ժողովրդի զանազան ներկայացուցիչները:

Խարտավիլակը բեմ է բարձրանում և դառնալով դեպի հարավային խորանը, բարձր ձայնով ասում է. «Հրամայեցէք սաղմոսասացք»։ Երկու բուրվառակիր սարկավազներ «Մուրք Աստուած» երգելով բերում են սաղմոսասացներին, որոնք տեղ հասնելով ձեռքները դնում են Տաճարի հյու-

սիսային խորանի առաջին աստիճանին, ծնրադրում են Հայրապետի առաջ։ Վեհափառը խաչակնքում և օրհնում է նրանց. «Օրհնեսցէ զձեզ Տէր ի Սիրովնէ, այն որ բնական է յՍրբաաղէմ»։ Սաղմոսասացները բարձրանում են իրենց տեղերից և կանգնում Վեհափառից ներքե, սեղանի աջ և ձախ կողմերում:

Այս նույն եղանակով առաջնորդվում են մյուս վկայողները հերթականութեամբ։ Այս պահիս են քահանաներն ու եպիսկոպոսները։ Վեհափառը օրհնում է և խաչակնքում նրանց. «Յիշեսցէ Տէր զամենայն զպատարաքս Զեր, և զուխտս ձեր ընդունելի արասցէ»։ Նույն ձևով գալիս են նաև «աղքատ»ները և «իշխան»ները:

Այս ամբողջ արարողութեան ընթացքում նորընծաները ծնրադիր աղոթում են Իջման Ս. Սեղանի առաջ։ Խարտավիլակ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի քաջալերական ձայնը հրավիրում է նրանց մոտենալ Վեհափառ Հայրապետին՝ ստանալու եպիսկոպոսութեան առաջին աստիճանը։ Նորընծաները, ահիվ և երկյուղիվ, ծնկաչոք, զուլգ-զուլգ մոտենում են Վեհափառ Հայրապետին, որն ասում է.



Վեհափառ Հայրապետ օծում է
Տ. Հայկազուն եպիսկոպոսի ճակատը



Վեհափառ Հայրապետը օծում է
Տ. Վարդան եպիսկոպոսի նակատը

«Շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն Աստուծոյ մերոյ կոչեմ զնուիրեալսդ առ իս, որ եկեալ կոխեսցէք զառաջին աստիճանն»:

Ապա Վեհափառը մի շարք հարցեր է տալիս խորատուփայլ սրբազանին՝ նվիրյալների անձնական կյանքի վերաբերյալ, որից հետո կարդացվում է նվիրյալների վկայութեան թուղթը: Նորից լսվում է Հայրապետի պատասխանը. «Որովհետեւ այդպես է, ամէք զդոսա յերկրորդ աստիճան»:

Ապա կարդացվում են հորդորական և խրատական աղոթքներ:

«Ջանադիր լերուք միշտ, զի ամենայն դօրութեամբ ձեր և մտօք պահեսցիք զպատուիրանս Աստուծոյ և զկանոնս Սուրբ Եկեղեցւոյ ուղղափառութեամբ ըստ Հին և Նոր Կտակարանացն Աստուծոյ, որով հովուեսցիք զեկեղեցի ձեր արիւսպէս և զատեսցիք զժողովուրդ ձեր անթիւր և անկաշառ ուղղութեամբ և այց արասցիք որբոց և ալրեաց և ամենայն վտանգելոց և աղքատաց ժողովրդեան՝ ձեռն տալով ողորմութեան որչափ կարասցիք»:

«Յօժարի՛ք կատարել և ուսուցանել գործովք և բանիւք զամենայն ինչ ժողովրդեան ձեր՝ յորոց վերայ կարգիք՝ որպէս խրատիք ի Սուրբ Գրոց»:

«Կամի՛ք օգնականութեամբն Աստուծոյ հովուել, խնամել և ուսուցանել զհօտն Քրիստոսի»:

«Կամի՛մք և յանձն առնումք»,— լսվում են նվիրյալների պատասխանները: Ուրիշ հարցեր ևս տրվում են նվիրյալներին. հարցեր՝ որոնք կապված են եպիսկոպոսութեան բարձր կոչման սրբութեան, առաքինութեան, ժուժկալութեան, կենցաղային մաքրութեան և ուղղամտութեան հետ:

Նույն ձևով, աղոթքով և օրհնութեամբ տրվում է մինչև յոթերորդ աստիճանը: Վերջին հարցումները շոշափում են Մայր Աթոռին, նրա ներկա Գահակալին և հաջորդներին հնազանդութեան վերաբերյալ կետերը: Առանձին շեշտով հնչում են Վեհափառի կարդացած խոսքերը. «Կամի՛ք մնալ հնազանդութեամբ ի ներքոյ բարձր իշխանութեան մեծի Աթոռոյս առաքելոցն Բարթոլոմէոսի և Թադէոսի, և Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և յաջորդի նորին, և այնոցիկ, որք զկնի մեր նստցին յԱթոռս յայս. և յոչ հնազանդելն ձեր յանձն առնուք նզովս յԱստուծոյ և ի Մէնջ»:

«Այո, յանձն առնումք կատարել զհրամանս ձեր, հնազանդելով մեծի Աթոռոյս և Ձեզ...»,— լսվում է պատասխանը:

Ապա Հայրապետի հրամանով նվիրյալները բարձրանում են արծվեգորդին և շրջան



Վեհափառ Հայրապետը օծում է
Տ. Հայրիկ եպիսկոպոսի նակատը

կազմում Հայրապետի շուրջը: Վեհափառ Հայրապետը հրապարակով քննում է նրանց հավատի ուղղափառությունը՝ իմանալու համար, թե արդյո՞ք նվիրյալները համաձայն են քրիստոնեական տիեզերական երեք ժողովների ընդունած որոշումներին և բանաձևերին, Հայոց Եկեղեցու հայրապետահատատ կանոններին, ընդունում են Ս. Գրիգոր Լուսավորչից սկսած մեր նախնի աստվածաբան վարդապետների դավանանքը, թե ոչ:

«Խոստովանիմք և հաւատամք», — լսվում է նորից պատասխանը:

Ուղղափառ հավատի հռչակումից հետո, նվիրյալները նշոյվում են ամեն տեսակ հերձվածները, աղանդներն ու նրանց առաջնորդներին: Նվիրյալներին օրհնությամբ տրվում է եպիսկոպոսական աստիճանի համապատասխան եկեղեցական զգեստ:

Վեհափառի աղոթքով վերջանում է ձեռնադրության հանդեսի այս մասը:

Ավագ Սեղանի վրա սկսվում է հայրապետական սուրբ պատարագը, որը շարունակվում է մինչև ճաշու ընթերցվածը: Ավագ Սեղանի բեմի վրա Վեհափառ Հայրապետը նստում է իր Հայրապետական Աթոռի վրա, շրջապատված 7 նորընծաներով: Վեհափառը կարդում է ձեռնադրության մեծ աղոթքը:

«...Դու Տէր՝ և զոր այսօր վերածեր անօրինութեամբ Քո ի բահանայապետական շնորհ, տուր սոցա նմանել Քեզ Ճշմարիտ Հովուիդ՝ դնել դանձինս իւրեանց ի վերայ ոչխարաց, առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիչ անդգամաց, լուսաւու տիեզերաց...»:

Ապա նվիրյալները, ծնկաշոր, դեմքերը դարձնում են դեպի ժողովուրդը, ձեռքի ափերը վեր բարձրացրած: Նրանք վերջականապես հրաժարվում են աշխարհից և նրա ունեւնութիւնից, պատրանքներից:

Ապա Մայր Տաճարով մեկ թնդում է կոշման շարականը. «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զոյէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կոչէ զՀայկազուն, զՊարզեւ, զՍերովբէ, զՀայրիկ, զՇնորհք, զՎարդան, զԵղնիկ վարդապետան ի բահանայութենէ յեպիսկոպոսութիւն...»: Օրհներգութիւնը կրկնվում է երեք անգամ: Նվիրյալները դառնում են դեպի Հայրապետը և շարվում նրա Աթոռի շուրջ, մինչ նա շարունակում է աղոթքի ընթերցումը, որպէսզի նվիրյալները ճշմարտութեամբ, հեզութեամբ, ձգնութեամբ և ժուժկալ համբերութեամբ զարգարված անց կացնեն իրենց կյանքը և օրինակ դառնան հավատացյալներին:

Համապատասխան մարգարեական, ալիւտարանական, առաքելական ընթերցվածներից, սաղմոսներից, շարականներից հետո,



Վեհափառ Հայրապետը օծում է Ս. Եղնիկ եպիսկոպոսի ճակատը

սուրբ պատարագը նույն վեհութեամբ շարունակվում է մինչև «Ողջոյն»: Վեհափառը նորից բաղմում է Աթոռ և կարդում վերջին աղոթքները:

«...Կցո զսոսա Հոգւովդ Քով Սրբով. զօրացո՛ւ և յաջողեա՛ւ սոցա օգնականութեամբ Քով յամենայն գործս բարիս, որպէս զի կալացնեն անարատ վարուք ըստ կամաց Քոց բարեսիրաց հովուել երկնային իմաստութեամբ բանաւոր հօտի Քում»:

Եպիսկոպոսներից մեկը հանդիսավորութեամբ խորանից բերում է արծաթյա մեռուռաթափ աղաւինին: Նրան ուղեկցում են բշտցակիրները, զուգ բուրվառակիրները: Վեհափառը, երեք անգամ խնկարկելով մեռուռաթափ սուրբ աղաւնուն, վերցնում է այն բերող եպիսկոպոսի ձեռքից, նրանով տառնագրում է ժողովրդին և ապա քաղցրածայն երգում «Առաքելոյ աղաւնոյ» շարականը: Երգի հնչւտների հետ կաթիլ առ կաթիլ թափվում են մեռուռի կաթիլները մեռուռամանի մեջ: Նվիրյալները եպիսկոպոսական լրիվ զգեստավորութեամբ կանգնել են Ավագ Սեղանի աջ և ձախ կողմերում:

Սկսում է օծման սրբազան արարողությունը. «Օրհնեսցի և սրբեսցի ճակատ...», — լսվում է Վեհափառի թրթռնոցող ձայնը, և մեկ առ մեկ Հայրապետը օծում է նվիրյալների ճակատները և ձեռքի բութ մատները,

մինչ խարտավիլակ Մամբրե սրբազանը նրանց գլխին դնում է եպիսկոպոսական խուլրերը: Տաճարը ամբողջովին լուսվում է դարձել, հազարավոր սրտեր ագահորեն ըմբռնում են հոգեպարար այդ պահը: Համաձայն Հայ Եկեղեցու վարդապետության, Ս. Մեռնոնով օծվողը ստանում է Ս. Հոգու շնորհքը, մեռնում է հին մարդը, նորոգվում է նորը: Ահա և հայ Եկեղեցու համար նորած եպիսկոպոսները, որոնց ձեռնադրությանը յոթ ձեռքեր ևս ավելացան Հայ Եկեղեցու հավերժության լուսատու ջահը բռնող ձեռքերին:

«Օծումնս զոր հեղեր առատութեամբ ի գլուխ սոցա՝ սիրոնացի լիապէս ընդ ամենայն մարմինս սոցա... Մի՛ դիցեն զլոյսն՝ խաւար, և զխաւարն՝ լոյս, զշարն՝ բարի և զբարին՝ չար, ալլ արդարութեամբ կացցեն ի գլուխ ժողովրդեան քո»:

Ապա համապատասխան աղոթքներով նորած եպիսկոպոսներին տրվում է եպիսկոպոսական գավազան և մատանի: Վեհափառը կարդում է վերջին Ավետարանը, որից հետո «Պահպանիչ»ով ավարտվում է ձեռնադրության սրբազան հանդեսը: Վեհափառը մեկ առ մեկ համբուրում է նորած եպիսկոպոսների ճակատները և օրհնում նրանց, ապա կանգնած նրանց կենտրոնում, տալիս է իր հայրապետական հորդորը, բնաբան առնելով Ավետարանի հետևյալ խոսքերը. «Գնացէ՛ք աշուհներ, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:

Իր քարոզի մեջ Վեհափառն արտահայտում է այն միտքը, որ եպիսկոպոսական ձեռնադրությունը դարեր շարունակ եղել է Հայ Եկեղեցու սրբագործված, նվիրական խորհուրդներից մեկը, որ եպիսկոպոսական օծմամբ նվիրյալները իրենց վրա են վերցնում մեծագույն պատասխանատվությունը ծառայելու ժողովրդին, Հայրենիքին և Եկեղեցուն: «Այսօր, — ասում է Վեհափառը, — հայ ժողովրդի ստվար մաս մը կգտնվի Սփյուռքի մեջ. Ձեր ջանքը պիտի ըլլա պայծառ ու անշեշ պահել անոնց մեջ հայ հավատքի ու հայրենասիրության հուրը, ի փառս Հայրենիքի և հայ ժողովրդի, և Դուք հանդիսացեք սրբազան

կամարները Մայր Հայրենիքի և Սփյուռքի, Մայր Աթոռի և մեր թեմերու միջև»:

Վերջում, Վեհափառն իր խոսքը ուղղելով նվիրյալներին, ասաց. «Ուրախ խաբրիկներ տարեք Ս. Էջմիածնն, անոր Գահակալեն, հայրապետական ջերմագին ողջույնը տարեք և մեր ժողովուրդին սերն ու համբույրը տարեք Սփյուռքի մեր սիրելիներուն»:

Վեհափառի շատ գեղեցիկ և հուզիչ խրատականից հետո սուրբ պատարագը շարունակվեց:

Սուրբ պատարագից հետո նորած եպիսկոպոսներին շնորհավորեցին Մայր Աթոռի միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը: Վեհափառը թափորով առաջնորդվեց Վեհարան:



Ուրախության, հոգևոր բերկրանքի տոն էր այդ օրը Մայր Աթոռի համար, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար, որովհետև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրագույն սպասին նվիրվեցին 7 արժանավոր եպիսկոպոսներ:

Ինչո՞ւմ է Հայ Եկեղեցու ուժն ու կենսունակությունը: — Միության և միասնականության մեջ: Մեր նախնիքը ամենախոր կերպով ըմբռնել են այս միության գաղտնիքը: «Զուգութիւնն է մայր բարեաց, անղուգութիւն ծնող շարեաց»: Դարեր շարունակ Հայ Եկեղեցին կարողացավ լավագույնս պայքարել ամեն տեսակ ոտնձգությունների դեմ, որոնք ուղղված էին իր անկախության, իր գոյության դեմ, որովհետև չպակասեցին արժանավոր և քաջ հովիվներ, որոնք իրենց կյանքի օրինակով կենդանի քարոզներ հանդիսացան Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասնության և ազգային միության:

Մի է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և մի է Ամենայն Հայոց Հայրապետությունը: Ահա՛ այն պատգամը, որը գալիս է դարերից և սուրբ է ամեն մի հայի սրտի համար: Ս. Էջմիածինն է մեր ծնողը, մեր մայրը, մեր օրրանը. մենք բոլորս մի մոր ծնունդ ենք. «Մի է հայրն մեր, մի և միակօսն ազգն Հայոց»:

